UK International Development
Partnership | Progress | Prosperity

International Foundation for Electoral Systems

FOUNDATION

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՃԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

- ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
- ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ
- ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱ

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Վարչական ռեսուրսի չարաշահումն անմիջականորեն կապված է ընտրական իրավունքի հետ

- **Ընտրական իրավունքի սկզբունքները՝**
- ընդհանուր ընտրական իրավունք
- հավասար ընտրական իրավունք
- ազատ ընտրական իրավունք
- ուղղակի ընտրական իրավունք
- գաղտնի քվեարկություն

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Վարչական ռեսուրսի չարաշահումը կանխարգելելու բնագավառում առկա հիմնարար **միջազգային չափորոշիչների աղբյուրները՝**

«փափուկ իրավունք» / «կոշտ իրավունք»

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

«Կոշտ իրավունք»՝

- միջազգային և տարածաշրջանային փաստաթղթեր
- պարտադիր սկզբունքներ և կանոններ

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Օրինակներ՝

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ՄԱԿ
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրություն, ԵԽ
- Կոռուպցիայի դեմ 2003 թվականի կոնվենցիա, ՄԱԿ
- ԱՊՀ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին 2002 թվականի կոնվենցիա

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

«Փափուկ իրավունք»՝

- միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված փաստաթղթերում տեղ գտած ուղենիշային հանդիսացող դրույթներ, դիրքորոշումներ, որոնք իրավական առումով ոչ պարտադիր են, ուղղված են լավ գործելաոճի և չափանիշների ձևավորմանը

Օրինակ՝ «Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման մասին» զեկույց, Վենետիկի հանձնաժողով, 2013

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Վարչական ռեսուրսի սահմանում

- մարդկային, ֆինանսական, նյութական, բնեղեն կամ ոչ նյութական այլ միջոցներն են,
- որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձինք և հանրային ծառայողները,
- որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ, հանրային ենթակառուցվածքների հասանելիությամբ,
- ինչպես նաև այն ռեսուրսները, որոնք արտահայտվում են ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձանց դիրքից բխող հեղինակության կամ հանրային ներկայության ձևով, և որոնք կարող են վերածվել քաղաքական կամ այլ բնույթի աջակցության:

«Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման մասին» Վենետիկի հանձնաժողովի 2013 թվականի զեկույց

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Ընտրական գործընթացի ժամանակահատված՝

- ընտրական գործընթացի ժամանակահատվածը չի սահմանափակվում միայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածով
- ընտրական գործընթացի ժամանակահատվածն ընդգրկում է տարբեր փուլեր, այդ թվում՝ ընտրական տեղամասերի ձևավորում, ընտրական հանձնաժողովների կազմավորում, թեկնածուների գրանցում
- վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելմանն ուղղված սկզբունքները և սահմանափակումները գործում են ընտրական գործընթացի ողջ ժամանակահատվածում

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսների իրավաչափ օգտագործման և չարաշահման միջև հստակ **տարբերակման հիմնական չափանիշներ են՝**

- վարչական ռեսուրսներն օգտագործելու ժամկետները
- հավասարակշռությունը՝ նման ծրագրերի իրականացման հաճախականությունը չպետք է տարբերվի ոչ ընտրական ժամանակահատվածից

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Վարչական ռեսուրսի չարաշահման օրինակներ միջազգային փորձից՝

- իշխող կուսակցությունը Հունգարիայի 2018 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ բոլոր թոշակառուներին տրամադրեց պարտատոմսեր
- Ռուսաստանի կառավարությունը 2018 թվականի նախագահական ընտրություններից առաջ քարոզարշավի ընթացքում բարձրացրեց աշխատավարձերը
- Չեռնոգորիայում 2020 թվականին նախընտրական քարոզարշավի ժամանակ տրամադրվեցին սոցիալական ապահովության վճարներ, չեղարկվեցին սպառված էլեկտրաէներգիայի դիմաց պարտքերը, հատկացվեցին արտահերթ սոցիալական նպաստեր «խոցելի» խմբերին, լրացուցիչ արտոնություններ տրամադրվեցին թոշակառուներին

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Մի շարք պետությունների մոտեցումները և օրենսդրորեն ամրագրված սահմանափակումները՝

- **Վրաստան՝** քվեարկության օրվանից 60 օր առաջ ընկած ժամանակահատվածում՝ ներառյալ քվեարկության օրը, արգելվում է բարձրացնել սոցիալական վճարների չափը, բացառությամբ այն վճարների, որոնց ավելացումը նախատեսված է եղել առնվազն ընտրությունների օրվանից 60 օր առաջ:
- **Ալբանիա՝** քվեարկության օրվանից չորս ամիս առաջ՝ մինչև ընտրություններից հետո նոր կառավարության ձևավորումը, արգելվում է առաջարկել, հաստատել կամ հրապարակել իրավական կամ երկրորդական օրենսդրական ակտեր, որոնք նախատեսում են բնակչության որոշակի խմբերին արտոնությունների տրամադրում
- **Իսպանիա՝** ընտրությունների նշանակման օրվանից մինչև քվեարկության ավարտն արգելվում է ձեռնարկել հանրային աշխատանքների կամ ծառայությունների որևէ բացման արարողություն

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Պաշտոնական հայտարարություններ՝ միջազգային փորձի օրինակներ

- **Վրաստան՝** պետական կառավարման կամ մունիցիպալ մարմնին արգելվում է քվեարկության օրվանից 60 օր առաջ ընկած ժամանակահատվածում ներառյալ ընտրությունների օրը, հեռարձակել որևէ գովազդային տեսահոլովակ, որը պարունակում է տեղեկատվություն համապատասխան մարմնի կատարած կամ ծրագրած աշխատանքի մասին
- **Իտալիա՝** նախընտրական քարոզարշավի սկզբից պետական կառավարման մարմինները չեն կարող իրականացնել հաղորդակցման նախաձեռնություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ապահանձնավորված են և խիստ անհրաժեշտ իրենց գործառույթների իրականացման համար
- **Իսպանիա՝** ընտրությունների նշանակման օրվանից մինչև քվեարկության ավարտն արգելվում է անցկացնել պետական մարմինների կողմից ուղղակի կամ անուղղակի կազմակերպվող կամ ֆինանսավորվող որևէ միջոցառում, որը հղումներ է պարունակում ձեռքբերումներին և նվաճումներին
- **ՄԹ՝** սահմանափակումները ոչ միայն նպատակ ունեն սահմանափակել ընտրողների ձայների վրա ազդելու նպատակով առավելություններն օգտագործելու հնարավորությունը, այլև կապված են նախընտրական քարոզչության ընթացքում կատարվող ծախսերի հետ: Երբ այցն իրենից ներկայացնում է քաղաքական և պաշտոնական գործունեության համակցություն, ապա ակնկալվում է, որ թե՛ նախարարությունը և թե՛ կուսակցությունը կկրեն փաստացի ծախսերի իրենց բաժինը
- **Լիտվա՝** եթե իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ է կարևոր լուրեր հայտնել լրատվամիջոցներին, Սեյմի անդամ հանդիսացող թեկնածուն դա կարող է անել միայն ասուլիսի ժամանակ

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

Հանրային ծառայողների մասնակցությունն ընտրական գործընթացներին՝ միջազգային փորձի օրինակներ

- **Ալբանիա՝** նախընտրական քարոզարշավի ընթացքում պետական հիմնարկներում աշխատանքի ընդունելը, աշխատանքից ազատելը, տեղափոխություններն արգելվում են՝ որոշ բացառություններով
- **Չեռնոգորիա՝** ընտրությունների նշանակման օրվանից մինչև ընտրությունների անցկացման օրն ընկած ժամանակահատվածում պետական մարմիններում և հիմնարկներում աշխատանքի ընդունելը թույլատրվում է բացառիկ դեպքերում: Հանրային պաշտոնյաներին արգելվում է նախընտրական քարոզարշավի ընթացքում օգտվել ծառայողական ավտոմեքենաներից՝ բացառությամբ ծառայողական պարտականությունների կատարման համար
- **Գերմանիա՝** գործող քաղաքապետ թեկնածուն մասնակցել էր նոր շինարարական համալիրի շնորհանդեսին և պատասխանել լրագրողների հարցերին: Դատարանը հիմնավորեց այն փաստը, որ թեկնածուն կկատարեր իր ծառայողական պարտականությունները, եթե ստորագրեր պաշտոնական փաստաթղթեր կամ միաժամանակ նույն տեղում գտնվեր քաղաքացիական ծառայողների հետ

Չարաշահման օրինակներ՝ ըստ միջազգային դիտորդական զեկույցների

- Գույքի սեփականաշնորհման վկայականների հանձնումը,
- տեղական ենթակառուցվածքային նախագծերի (նախապես) հայտարարումը՝ քարոզչական նպատակով,
- պետական բյուջեի որոշ մասերի օրինակ՝ մշակութային մասի, անհամաչափ ծախսումը նախընտրական քարոզչության փուլում,
- ուսուցիչների և աշակերտների ներգրավումը նախընտրական միջոցառումներին,
- քարոզչության իրականացումը աշխատանքային ժամերին,
- ծառայողական պարտականությունների իրականացումը նախընտրական քարոզչության փուլում արձակուրդում գտնվելու ընթացքում,
- Հանրային ոլորտի աշխատակիցների/հանրային ծառայողների նկատմամբ ճնշում գործադրելու դեպքերը, այդ թվում՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելուն և քվեներ ապահովելուն կամ ընդդիմության նախընտրական միջոցառումներին չմասնակցելուն ուղղված ճնշումները։

Ներպետական իրավակարգավորումներ

- **Ի՞նչ է վարչական ռեսուրսը**

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝

վարչական ռեսուրսները

- **մարդկային,**
- **ֆինանսական**
- **նյութական այն միջոցներն են,**

որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք՝ պայմանավորված հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

<u>Վարչական ռեսուրսները ներառում են նաև</u> ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային ու կապի միջոցները ԸՕ, հոդված 23

Ներպետական իրավակարգավորումներ

- **Վարչական ռեսուրսի չարաշահման արգելքը՝ ըստ ՀՀ օրենսդրության**

Վարչական ռեսուրսի չարաշահման արգելքը ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածից, որով՝ երաշխավորվում են ընտրական իրավունքի սկզբունքները: Դրանց համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են

- ընդհանուր,
- հավասար,
- ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝
- գաղտնի քվեարկությամբ

- ՀՀ ընտրական օրենսգրքով արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպման և իրականացման ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով:

Ներպետական իրավակարգավորումներ

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է՝

- ✓ իրենց պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար.
- ✓ ոչ ծառայողական այդ թվում՝ նախընտրական քարոզչության նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և <u>ծառայողական տեղեկատվությունը</u>:

Ներպետական իրավակարգավորումներ

- Հանրային ծառայողները քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելիս իրավունք չունեն հանդես գալու ի պաշտոնե կամ նշելու իրենց պաշտոնեական դիրքի, կոչման մասին կամ որևէ կերպ օգտագործելու պաշտոնի հեղինակությունը որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի օգտին:

Ներպետական իրավական կարգավորումներ

- Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հանրային ռեսուրսներն օգտագործում են արդյունավետ և խնայողաբար:
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս դրսևորում են անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն:
- Հանրային ծառայողը, ծառայության առանձնահատկություններին համապատասխան, ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքականապես չեզոք է:
- Հանրային ծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարելիս իրավունք չունի կրելու կուսակցական պատկանելությունը խորհրդանշող նշաններ:

Ներպետական իրավական կարգավորում

- **Ու՞մ է արգելվում նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը իր լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս**

- հանրային ծառայության մեջ գտնվողներին
- առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների աշխատողներին
- ուսումնական հաստատությունների աշխատողներին
- նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին:

Ներպետական իրավակարգավորում

- **Ու՞մ չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը**

- Ազգային ժողովի պատգամավորին, համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը՝ բացառելով վարչական ռեսուրսների օգտագործումը:

Ներպետական իրավակարգավորում

- **Ինչպե՞ս կարող են հանրային ծառայողները մասնակցել նախընտրական քարոզչությանը**

- Հանրային ծառայողներն իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով մասնակցելու նախընտրական քարոզչությանը՝ պահպանելով քաղաքական զսպվածությունը:
- Հանրային ծառայողների քաղաքական գործունեությունը չպետք է կասկածի տակ դնի հանրային ծառայության անկողմնակալությունը:
- Հանրային ծառայողները քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելիս իրավունք չունեն հանդես գալու ի պաշտոնե կամ նշելու իրենց պաշտոնեական դիրքի, կոչման մասին կամ որևէ կերպ օգտագործելու պաշտոնի հեղինակությունը որևէ կուսակցության կամ թեկնածուի օգտին (բացառությամբ ընտրություններին որպես թեկնածու հանդես եկող հանրային ծառայողների):
- Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ծառայողի՝ որպես պաշտոնատար անձի մասնակցությունը քաղաքական բնույթի քննարկումներին պետք է կրի բացառապես տեղեկատվական բնույթ և արտահայտի պաշտոնական դիրքորոշումը:

Ներպետական իրավական կարգավորում

- **Ու՞մ է արգելվում նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը իր աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս**

- պետական հիմնարկների կամ կազմակերպությունների աշխատակիցներին
- համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների աշխատակիցներին
- կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին

Ներպետական իրավակարգավորում

- **Ո՞ր անձանց է ընդհանրապես արգելվում նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը**

- Դատավորներին.
- Դատախազներին.
- Ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողներին, զինծառայողներին, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննչական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ, քննիչներ).
- Ընտրական հանձնաժողովների անդամներին.
- Բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին.
- Օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց, բացառությամբ ՏԻՄ ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձանց.
- Մարդու իրավունքների պաշտպանին.
- Կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի անդամներին.
- Հաշվեքննիչ պալատի անդամներին.
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին.
- Ինքնավար մարմինների անդամներին.
- Բարձրագույն դատական խորհրդի անդամներին.
- Հանրապետության նախագահին.
- Դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին:

Ներպետական իրավակարգավորում

- **Նախընտրական քարոզչության իրականացումը հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուների կողմից**

- Հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են հետևյալ սահմանափակումների հաշվառմամբ.

- արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս.

- պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար.

- արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների:

- հանրային ծառայության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունները:

Ներպետական իրավակարգավորում

- **Ո՞վքեր են ազատվում իրենց ծառայողական պարտականություններից, եթե առաջադրվում են որպես պատգամավորի թեկնածու**

- Հանրային ծառայության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուները (բացառությամբ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների և կառավարության անդամների) նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչև քվեարկության օրն օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Այդ ժամանակահատվածում նշված թեկնածուների բացակայությունն աշխատանքից համարվում է հարգելի՝ առանց վարձատրության պահպանման:

Ներպետական իրավակարգավորում

- Ո՞վքեր են ազատվում իրենց ծառայողական պարտականություններից, եթե առաջադրվում են որպես համայնքի ավագանու անդամի թեկնածու (համամասնական ընտրակարգով)

Համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու անդամի թեկնածու հանդիսացող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն ու պաշտոնատար անձինք (բացառությամբ քաղաքական, վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնողների)՝

- նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչև քվեարկության օրը օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Այդ ժամանակահատվածում նշված թեկնածուների բացակայությունն աշխատանքից համարվում է հարգելի՝ առանց վարձատրության պահպանման:

Վարչական ռեսուրսի չարաշահման օրինակներ

Մարզպետի պաշտոնը զբաղեցնող թեկնածուն նախընտրական քարոզչության նպատակով այցելում է համայնքներ՝ օգտագործելով իր ծառայողական մեքենան։

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կազմակերպում է աշխատակիցների տեղափոխումը աշխատանքային ժամերին կամ դրանից հետո՝ այլ քաղաք կուսակցության նախընտրական հանրահավաքին մասնակցելու նպատակով։

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակիցներին հորդորում կամ հանձնարարում են մասնակցել իշխող կուսակցության նախընտրական հավաքին՝ աշխատանքային ժամերին կամ դրանից հետո։

Պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնական ֆեյսբուքյան էջում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հրապարակվում են քարոզչական բնույթի նյութեր կամ գրառումներ։

Իրավակիրառ պրակտիկա

- **Իրավիճակային վերլուծություն 1**

Հայաստանում անցկացված ընտրություններից մեկի նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ԶԼՄ-ներով հրապարակված տեսանյութի ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը.

- ՀՀ մարզպետարաններից մեկի աշխատակիցը նախընտրական քարոզարշավի շրջանակներում ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցության կողմից կազմակերպված միջոցառմանը մասնակցելիս լրագրողին հարցազրույց է տալիս և ներկայանում որպես «կրթության ոլորտը համակարգող»: Վերջինս՝ ընդունում է, որ աշխատանքային ժամին գտնվում է հավաքի վայրում, ավելին՝ բացահայտ խրախուսում է նաև մանկավարժների ներկայությունը այդ միջոցառմանը:

- Տեսանյութի հաջորդ դրվագներում հարցազրույց են տալիս համապատասխան մանկավաժները, ովքեր ընդունում են, որ աշխատանքային ժամին գտնվում են համապատասխան քաղաքական կուսակցության կազմակերպած միջոցառմանը: Ընդ որում, նրանցից մեկը մանկապարտեզի աշխատակից է, ով փորձում է իր ներկայությունը արդարացնել երեխաների «ապահով» լինելով, իսկ մյուսը՝ դպրոցի աշխատակից է, ով փորձում է իր ներկայությունը արդարացնել միջոցառմանը մասնակցելու նպատակով դասապրոցեսը շուտ ավարտելու հանգամանքով:

Իրավակիրառ պրակտիկա

- Քաղվածք նշված իրավիճակի վերաբերյալ կայացված դատական ակտից.

«Աշխատանքային ժամին համապատասխան կուսակցության նախընտրական քարոզչությանը մասնակցելու և մանկավարժների մասնակցությունը խրախուսելու վարքագիծը կարող է հանրության կողմից ողջամտորեն ընկալվել որպես քաղաքական տվյալ ուժի համար ի պաշտոնե քարոզչություն իրականացնել: Իսկ դա ուղղակիորեն արգելված է ԸՕ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Նույնը վերաբերում է հաջորդ դրվագներում հարցազրույց տվող մանկավաժներին …: Աշխատանքային ժամերին մանկավարժների ներկայությունը նախընտրական քարոզարշավին ողջամտորեն կարող է ընկալվել որպես իրենց դիրքի և հեղինակության օգտագործում ի շահ քաղաքական ուժի: Ի պաշտոնե գործելիս մանկավարժների մասնակցությունը նախընտրական քարոզարշավին նույնպես արգելված է ԸՕ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հանդիսանում է վարչական ռեսուրսի չարաշահում»:

Իրավակիրառ պրակտիկա

- Քաղվածք Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների Ակնատես դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցից

- Վարչական շրջանում տեղի ունեցած իշխող կուսակցության քարոզարշավին մասնակցել են քաղաքապետի խորհրդականը և վարչական շրջանի ղեկավարի տեղակալը, որոնք չեն գտնվել արձակուրդում: Մեկ այլ դեպքում նշված անձինք աշխատանքային ժամին գտնվել են կուսակցության նախընտրական շտաբում:
- Վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցներին դիտորդները նկատել են աշխատանքային ժամերին իշխող կուսակցության բուկլետներ բաժանելիս:
- Վարչական շրջանի ղեկավարի տեղակալը և ժամանակավոր պաշտոնակատարը արձակուրդում չգտնվելով՝ պարբերաբար մասնակցել են իշխող կուսակցության կողմից կազմակերպած բակային հանդիպումներին, պարբերաբար քարոզչական կարգախոսներով ֆեյսբուքյան գրառումներ կատարել:
- Վարչական շրջանի տեղակալը, ինչպես նաև թաղապետարանի այլ աշխատակիցներ աշխատանքային ժամին մասնակցել են նույն կուսակցության քարոզարշավին:
- Նույն կուսակցության նախընտրական շտաբում աշխատանքային ժամին գտնվել են վարչական շրջանի աշխատակազմի քարտուղարը, վարչական շրջանի ղեկավարի տեղակալը և համապատասխան համատիրության նախագահը:

Իրավակիրառ պրակտիկա

- «X մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիչը ներգրավված է եղել վարչական շրջանում սեպտեմբերի 12- ին կազմակերպված «Զեյթունի օրվա», իսկ համատեղության կարգով՝ նաև իշխող կուսակցության քարոզչական միջոցառմանը մարզադպրոցի սաների մասնակցությունն ապահովելու գործում: Մարզադպրոցի մարզիչը դպրոցի սաների ծնողական խմբում տարածել է միջոցառման մասնակցության մասին հայտարարությունը, նշելով, որ «ցանկալի ու պարտադիր է բոլորի ներկայությունը», իսկ միջոցառումից ժամեր առաջ ծնողներին ևս մեկ անգամ հիշեցում է ուղարկվել երեխաների մասնակցության մասին:

- Մարզադպրոցի ֆեյսբուքյան էջում բազմաթիվ են եղել քաղաքական կուսակցության քարոզչական նյութերը:

- Նույն միջոցառմանը մասնակցություն ապահովելու նպատակով երաժշտական դպրոցի սաների ծնողական խմբում տեղադրվել է միջոցառման հայտարարությունը՝ ընդգծելով, որ երեխաների և ծնողների մասնակցությունը շատ ցանկալի է և որ խնդրանքը փոխանցվում է տնօրենի անունից:

Ներպետական իրավակարգավորում

- **Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները վարչական ռեսուրսի օգտագործման համատեքստում**

- Հանրային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն չարտահայտել իր քաղաքական տեսակետները, ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել:

- Հանրային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որը, ի թիվս այլնի, ներառում է հանրային իշխանության մարմինների տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ ցուցադրելը, ինչպես նաև իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնում որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզ իրականացնելը:

Ներպետական իրավակարգավորում

- Հանրային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չկատարել քաղաքական շահը սպասարկող քայլեր կամ ներգրավվել դրանց պաշտպանության մեջ, չկատարել նման գործունեության համար հանրային միջոցներ տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել այլ հանրային ծառայողների:

- Հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

Ներպետական իրավակարգավորում

- **Համայնքային ծառայողների վարքագծի կանոնները վարչական ռեսուրսի օգտագործման համատեքստում**

- Համայնքային ծառայողը պարտավոր է իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց:

- Համայնքային ծառայողը պարտավոր է խուսափել անհարկի խոստումներից, գիտակցել իր խոսքի արժեքն ու կարևորությունը, տրված խոստման կատարման անհնարինության դեպքում առաջացող հնարավոր բացասական հետևանքները:

- Համայնքային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն չարտահայտել իր քաղաքական տեսակետները, ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել:

Ներպետական իրավակարգավորում

- Համայնքային ծառայողը պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

- Համայնքային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որը, ի թիվս այլնի, ներառում է տեղական ինքնակառավարման կամ հանրային իշխանության մարմինների տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ ցուցադրելը, ինչպես նաև իր աշխատավայր հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմնում որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզ իրականացնելը:

Ներպետական իրավակարգավորում

- Համայնքային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չկատարել քաղաքական շահը սպասարկող քայլեր կամ ներգրավվել դրանց պաշտպանության մեջ, չկատարել նման գործունեության համար հանրային միջոցներ տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել այլ հանրային ծառայողների:

- Համայնքային ծառայողը պարտավոր է իր գործունեության համար տրամադրված հանրային ռեսուրսները և այլ գույքն օգտագործել միայն ծառայողական նպատակներով և խնայողաբար:

Ներպետական իրավակարգավորում

- Համայնքային ծառայողը պարտավոր է հանրային ռեսուրսները, այդ թվում՝ այլ հանրային ծառայողների աշխատաժամանակը, չօգտագործել սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

- Համայնքային ծառայողը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի հետ:

Ներպետական իրավակարգավորում

- **Պետական պաշտոն զբաղեցնող անձինք, համայնքների ղեկավարները, նրանց տեղակալները, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարները, նրանց տեղակալները.**

- Պարտավոր են հարգել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն դրսևորելու օրենսդրական պարտականությունը և չպահանջել նրանցից գործել դրա շրջանակներից դուրս:

- Պարտավոր են ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին՝ օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իրենց, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար, չներգրավել այլ հանրային պաշտոն զբաղեցող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամերը կամ այլ ռեսուրսները այդ նպատակի համար:

Ներպետական իրավակարգավորում

- Պարտավոր են իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս չկատարել կուսակցական շահը սպասարկելու համար հանրային ռեսուրսները տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների:

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքական զսպվածության պարտավորություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական մեդիայում ունեցած իրենց օգտահաշվից քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

Ներպետական իրավակարգավորում

- Վարքագծի կանոնագրքի իմաստով՝ հանրային ռեսուրսները ծառայողական պարտականությունների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական, մարդկային ռեսուրսներն են, աշխատաժամանակը, պետական կամ հանրային սեփականություն հանդիսացող այլ ռեսուրսները:

Ներպետական իրավակարգավորում

- Քաղաքացիական ծառայողը պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն: Քաղաքացիական ծառայողի քաղաքական զսպվածությունը ենթադրում է՝

- խուսափել հանրային հարթակներում քաղաքական կողմնորոշում ունեցող այնպիսի հոդվածներ, տեսակետներ հրապարակելուց, որոնք կխաթարեն հանրային ծառայության անկողմնակալությունը.

- ձեռնպահ մնալ որևէ կուսակցության օգտին կամ դեմ այնպիսի քարոզ իրականացնելուց, որը խաթարում է հանրային իշխանության անաչառությունը և հեղինակությունը:

Ներպետական իրավակարգավորում

- Քաղաքացիական ծառայողը քաղաքական գործունեության ընթացքում պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են ողջամտորեն կասկածի տակ դնել իր՝ որպես հանրային ծառայողի կամ իր աշխատավայրը հանդիսացող հանրային իշխանության մարմնի կամ առհասարակ հանրային իշխանության անկողմնակալությունը։

- Քաղաքացիական ծառայողը քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում, ինչպես նաև մյուս քաղաքացիական ծառայողների հետ հարաբերություններում՝ չպետք է անհարկի նշի իր անդամակցության մասին որևէ կուսակցությանը՝ նպատակ ունենալով ստանալ որևէ անձնական շահ, արտոնություն, առավելություն։

Ներպետական իրավակարգավորում

- Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ իր պաշտոնեական դիրքը որևէ կուսակցության համար արտոնություններ ստանալու նպատակով օգտագործելուց:

- Քաղաքացիական ծառայողը պարտավոր է խուսափել ցանկացած հովանավորչությունից: Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ իր զբաղեցրած պաշտոնով պայմանավորված որևէ առավելություն ստանալուց:

- Քաղաքացիական ծառայողը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադասի կամ անմիջական ղեկավարի հետ:

Ներպետական իրավակարգավորում

- Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ստացված տեղեկատվությունն անձնական օգուտ կամ առավելություն ստանալու նպատակով օգտագործելուց:

- Քաղաքացիական ծառայողը պարտավոր է արդյունավետորեն և խնայողաբար օգտագործել հանրային ռեսուրսները, այդ թվում՝ ծառայողական գույքը, ինչպես նաև չօգտագործել դրանք սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

Իրավական պատասխանատվության մեխանիզմներ

Հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելը, որը կատարվել է՝

իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Քրեական օրենսգիրք, հոդված 210, մաս 3, 2-րդ կետ

Իրավական պատասխանատվության մեխանիզմներ

Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը՝

որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Քրեական օրենսգիրք, հոդված 211, 2-րդ մաս, 3-րդ կետ

Իրավական պատասխանատվության մեխանիզմներ

- Օրինական հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը, օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելուն հարկադրելն անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ շանտաժի միջոցով, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Քրեական օրենսգիրք, հոդված 236

Իրավական պատասխանատվության մեխանիզմներ

- Պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

Քրեական օրենսգիրք, հոդված 441 (մաս 1)

Իրավական պատասխանատվության մեխանիզմներ

1. Քարոզչության համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով։

2. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների և մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների համար, ինչպես նաև պաշտոնեական դիրքի օգտագործումն ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորսհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով։

ՎԻՎՕ, հոդված 40.8

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ